

ԲԱԺԱՆՈՐՈՒՄ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Տոնակարգի համար
 Տարեկան 10 Ֆր.
 Վեցամսեայ 5 »
 Արտասահմանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԵԼԻ
 —) —
 Կրտսերիսիսի ևս չեն տրուիր
 —) —
 Երանուցման տողը 20 սան-
 րիսի և ևրեհիսի անի սան-
 ցաւներու համար 20 010
 գնից կըրոյն:

ՇՆԱՐԹԻՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇՆԱՐԹ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Տ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Նւնակ և գրաւ գրիկ
 Կմրագրութեան հասցիսն

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ՓՈՒՎՈՒՄ ԵՆՔ

«Ինչ չը կծող օձը, ինչքան կուզէ թո՛ղ ապրի»։ Թաճական այս առածը դարձրով եղել է մեր ժողովրդի նշանաբաններից մէկը, մի սկզբունք մեր բնկերական կեանքի մէջ։ Այդ պատճառով էլ հասարակութեան համար փաստա- կար անգամը միշտ գիմացել է, շարունակել իր փաստակար գործունէութիւնը և կեանքը։ Որովհետեւ, ինքն էլ նոյն առածի իմաստը լաւ ըմբռնած լինելով, միշտ զգուշութեամբ է վարվել հասարակութեան օձիկ անդամների հետ, նրանց չէ կծել, այլ շանայել է իր թոյնը թափել թոյլերի, աշդեցութիւն շրնեցողների վրա՝ և ազատ համարձակ ծծել ժողովրդի արիւնը...

Օձը շարունակ խայթել է իսկ հասարակութեան ազգեցիկ, օձին ջախջախելու կարող անդամները լուռ հանդիսատես են եղել, մտքերի մէջ փոփոխով—մեզ ինչ, այդ օձը մեզ չի կծում...

Ա.Մին մի հասարակական գործի մէջ անձնական հաշիւները մեծ և գուցէ գլխաւոր դերը խաղալու պատճառով, փաստակար, բայց զօրեղ, կծելու բնկերական անհատը պաշտպանվել է, իսկ ժողովրդի շահերին անկեղծօրէն ներկայացնելու համար զոհուելու պայքարը հասարակական շահերը պաշտպանած միջոցին արդէն իր անձնական շահերը բռնաբռնելով ժողովրդին կծող ուժեղ օձերի դէմ, դիպել նրանց շահերին, քանզի նրանց ստոր հաշիւները, առանց ուշադրութիւն դարձնելու որ հասարակութեանը խայթող օձը իրան չէ կծել։ Մի խօսքով մեր ժողովրդի շահերի պաշտպան անհատը օտար տակէ տակ «Ինչ չը կծող օձը, ուղածի շափ թող ապրի» սկզբունքը, և այդպիսով իր դէմ գրգռել բոլոր օձերին...

Այսպէս է եղել մեր կեանքը և դեռ շարունակում է ընթանալ նոյն կերպով։ Բայց այսօր մի փոքր տարբերութիւն կայ, փոխ-

վելու նշաններ են երեւում։ Վերջ յիշած սկզբունքի սղոցեցութիւնը թաւանում է և սուտ բանում այն հայերի թիւր, որոնք բոլորովին հակառակ նշանաբանը, սկզբունքը ունեն։ «Ժողովրդին, ընկերոջս խայթող օձը պէտք է սատկի, և անպատճառ, թէև երբէք ինչ չէ անի»։

Եւ այս երեւոյթը բնական է հայկական յեղափոխութիւնը միայն տաճական բէթմից ազատվելու համար չէ։ Նա իբր մեր կեանքի պահանջների հարադաս ծնունդ, իբր կատարել վերահասարակական ամենաուժեղ և ամենակարեւոր ազգակ, պէտք է բռնաբռնել յեղաշրջել մեր ժողովրդային կեանքը, տապալել շատ անբարոյական, ստրկական կեանքին միայն յարմար սկզբունքներ, հայեցողութիւններ, և մեզ ազատէր, ոչ միայն տաճակ լծից, այլ և բոլոր մտաւոր ու բարոյական ճնշող, խեղդող լծերից, որոնք մեր կեղծիքին չողած, մեր ուղեղը սեղմած, մեր մտի մէջ խրված, արգելում էին մեզ յառաջանալ դէպի իսկական վերածնութիւնը։ Այո, հայկական յեղափոխութիւնը փոխում է մեր ժողովրդին, ամեն կերպ վերանորոգում, ու այդպիսով մի գրական, կենդանի փաստ տալիս իր անհրաժեշտութեան և օգտակարութեան։ Մենք կամայականայ փոխում ենք, շատերս առանց մեզ հայել տալու, գրեթէ բնազդաւոր։

ՎԱՐԳՈ

ՆՊԱՍՏԻ ԳՈՐԾԸ ՎԱՆԻ ՍԷՋ

Վանէն, ամերիկեան միսիօնար ասօքթ. Բէյնօլտս հրատարակած է անցեալ 1898 տարուան երկրորդ կիսամիսիային մէջ նոյն գտնաւին հայ կարօտեալներուն հասցուցած նպատակն մանրամասն տեղեկագիրը։ Ասելով չենք համարել այդ տեղեկագրին պարունակութեան վրայ դաշտաբար մը տալ մեր ընթերցողներուն։

«Նոյնեալ գարնան, լըտէ յարգելի միսիօնարը, ամէնքը կը յուսային թէ հունձքերը լաւ պի-

տի ըլլային, բայց ստացուած արդիւնքը սովորականին կէսին անգամ չի հաւաստեցաւ։ Այս անգոհացուցիչ արդիւնքը միայն Վանի նահանգին մէջ չէր, այլ նաեւ Մուսուլի ու պարսից սահմանագլխի նահանգներուն մէջ, որով այդ կողմերէն ալ ցորենի փոխադրութեան յոյս չէր մնացած։ Այս դժուարութեանց վրայ պէտք է աւելցնել նաեւ քիւրտներու սովորական աւազակութեանց ու կողոպտանքներուն կրկնապատկուելը։ Ասանց յոնդղնութեան իբր օրինակ կրնայ ծառայել գերմանացի հնախոյզ Պէլքի վրայ եղած յարձակումը։ Միւս կողմէ կառավարութիւնն ալ այն աստիճան խտրութեամբ տուրքեր սկըսած էր հաւաքել, որ ժողովուրդը ստիպուած էր իր անհրաժեշտ կենսական պիտոյքներէն զըրկուել հարկերը վճարելու համար։

«Շնորհիւ Լոնտոնի «Հայկական նպատաստաց կանանց մասնա-ժողովին» օժանդակութեան, կանանց արհեստանոց մը և որբանոց մը կը պահէինք, ըստ բաւականին նպատաստաններուն պէտքերը հոգայով։ Բայց փողոցները լեցուած էին անտէր թշուառներով։ Բարեբախտաբար Մենդեան աստեւ Կ. Պոլսէն 300 ոսկիի նոր նպաստ մը եկաւ, որով 10 որբ ևս ընդունեցինք և մեր որբանոցի նպատաստաններուն թիւը հասաւ 400ի։ Բայց դեռ մեր որբանոցէն զուրս հազարաւոր թըշուառներ կան որոնք սովէն կտարուելու վտանգին մէջ կը գըտնուին»։

Նոյն տեղեկագրէն կը հասկնանք որ, Տօքթ. Բէյնօլտսի գործին աջակցած է Պէլքի ընկերը, Տօքթ. Լէման, որ ի յիշատակ իր հանդուցեալ եղբօր, երեք սարուան համար իր մասնաւոր խնամքին տակ է առած 12 տարեկան սիրուն որբ հայ աղայ մը։

Տօքթ. Բէյնօլտս իր տեղեկագրին մէջ յիշած է նաեւ ստացած գումարներուն և կտարած ծախքերուն մանրամասն հաշիւը։ Այս հաշիւէն կը եւնտի որ յարգելի միսիօնարը անցեալ տարի զանա-

զան նպատակներու համար ծախսած է 175,600 ֆր.։ Այս գումարին մեծ մասը ստացած է Անգլիայէն և փոքր մաս մը Գերմանիայէն։ Արհեստանոցին մէջ որբերը զանազան արհեստներ կը սովորին, ինչպէս կօշկակարութիւն, կտաւագործութիւն, գերձակութիւն, հացագործութիւն, աղիւսագործութիւն, խաղաղորդութիւն և երկաթագործութիւն։

Տօքթ. Պէլք և Լէման գլխուններն ալ ուրիշ տեղեկագիր մը հրատարակած են, ուր մեծ գուլեստով ու համակրութեամբ կը խօսին Բէյնօլտսի ու իր կնոջ գործունէութեան մասին, որոնք կը խնամին ու կը կրթեն մօտ 400 որբ մանուկներ ու որբանոցէն զուրս ալ կօշկեն մօտ 700 թշուառներու։ «Եթէ այս հազարաւոր թշուառները սովէ ու բռնի խաւանալէ ազատուած են, առիկա միմիայն անոնց ջանքերուն շնորհիւ է։ Բայց այնքան մեծ է թշուառութիւնը որ, եթէ անոնք երկու անգամ աւելի որբեր խնամեն և կրկին թուով թշուառներու օգնութեան հասնին, դարձեալ չեն կարող անոր առաջքն առնել»։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօշուան, 23 Փետր.

Ամսույս 23 ին տեղույս Ս. Ղևոնդեան արական վարժարանին անուան տարեդարձին առթիւ տեղական սովորութեան մը համաձայն դպրոցական հանդէսին հետ կատարուեցաւ նաեւ Վարդանանց հանդէսը։

Վարժարանիս ընդարձակ միջնարանը պատշաճ կերպով զարգարուած էր օրուան հերոսին ինչպէս նաև ազգային նշանաւոր դէմքերու պատկերներով։ Գլ. օր պատարագէն անմիջապէս յետոյ սկսաւ հանդէսը ի ներկայութեան երկսեռ բազմութեան մը։ Երգերու պարբերական ընդմիջումով աչակերաններու կողմէ կարգացուեցան ճառեր որոնք զպրոցի և դատարարական անհրաժեշտ պէտքը զգացնել յետոյ՝ մասնաւորապէս ի վեր հա-

Քեան հասնելու համար :
Հանդէսը վերջացաւ Տ. Ոստանիկ-
եանի աստուածաբանութեամբ, որ ձայն-
ակցեց Տ. Նահապետեանի՝ բնա-
թէ վարդանը այդպէս թեթեւա-
թեամբ գնահատելը սերտորոժու-
թիւն է եւ հայտնաբերուող արդար-
այն ամենէն պաշտելի հերոսի մը յիշ-
ատակին ուղղուած : Ժողովուրդը
ցրտեցաւ զժողով անդառնալով ու յիշող
խօսողներէն ու զո՞հ լուրջ զգոյշուն
բանաստեղծներէն :

ԳՍԱԱԿ

ԵՐԿՏՈՂ ՄԸ Հ.Ն.Գ.Ս ՍՄՍՐԵԱՅԻՆ

«Հանդէս Սմտորեայ»-ի վեր-
ջին թիւին մէջ կը շնորհատորէ
Տատեան Արթիւնի վաշտն, որ ար-
ժանացեր է Մէծիտիէի ստալին
կարգի բարձր (°) պատուանշա-
նին :

«Հանդէս»-ի այս շնորհատորու-
թեանն այնպէս կը հասկցուի որ,
Վիէնայի Միաբանութեան աշ-
քին Մէծիտիէի պատուանշանը
այն բարձր բարոյական արժէքն
ունի, որուն արժանացողը «Հան-
դէս»-ի պէս մասնագիտական թեր-
թիւ մը մէջ անգամ հրատարա-
կաւ շնորհատորելու պէտք կը լա-
լալ :

Կը վարժանանք որ «Հանդէս»-ը
որ, և ոչ իսկ անգամ մը չէ բարե-
հասած յիշատակելու ժողովրդին
ճշմարիտ գաւկնեքը, իրենց վտեմ
և հանրօգուտ ծառայութիւննե-
րուն համար՝ բնաւ առիթ չի տա-
ցընք շնորհատորելու ազգին ու
ժողովրդին գլխուն հասցուցած
փաստերուն շնորհիւ պետական
պատիւներու ու պատուանշաննե-
րու արժանացող սարուկները :

Մենք այսօրինակ զգացումներ
կրող անկարագիր վանականնե-
րուն մտտին ճշմարիտ արհամար-
հանք մը ունինք, և այս սողերը
կը զրենք միայն հասկցնելու հա-

մար տակաւին չհասկցողներուն,
թէ ինչ կա, զի բոններ են յաճախ
լեռան շափ սնուն ունեցող հաս-
տատութեանց անդամները :

Ու յի ոչ մենք ալ մեր կողմէն
ի վստահելն այդ շնորհատորու-
թեան, կը շնորհատորենք «Հան-
դէս»-ի խմբագրութիւնը շողմա-
րարութեան մէջ բրած այդ հսկայ
յուսակցի իման ճամբար և ի
սրտէ կը բարեմաղթենք որ քիչ
ատենէն ինքն ալ իր այս ջան-
քերով արժանանայ Մէծիտիէի,
Օստանիէի ու Իֆիթիտարի բարձր
պատուանշաններուն : (°)

Ք.

ՄԻՋԱԳՊԱՅԻՆ ԳՍԱ ՄԸ

Քանի մը տաքիներէ իվեր
Պարսից ու Իտալական կառավա-
րութեան մէջ, առեւտրական
հարցի մը առիթով, մեծ վէճ մը
սկսած էր : Վերջերս այս վէճը
այնպիսի կերպարանք ստացաւ,
որ իտալական կառավարութիւնը
սպառնաց իսկայն խզել ամէն
դիւանագիտական յարաբերու-
թիւն և խիստ միջոցներ գոր-
ծադրել Իտալիա, ապրող պարս-
կահոյս տակներու դէմ : Թէեւ
այս խզումը չէր կընար պատե-
րազմ առաջ բերել երկու տերու-
թեանց մէջ, բայց Պարսկաստան
կընար մեծապէս վնասուիլ թէ՛

(°) Կը գործանանք թէ ինչպէ՞ս կա-
րելի է Հանդէսի խմբագրութեանն
սպասել մեր հին կամ նոր ճշմարիտ
գործիչներու յիշատակութեանը, քա-
նի որ այդ թերթը Ռուսաստան և
Տաճկաստան կը մտնայ միանգամայն :
Կը կարծենք որ նոյն պատճառը մեծ
նշանակութիւն ունի նաեւ Սեւասի
համար ալ, որ նոյն իսկ չի խնայեր
ամէն յոռոտիչիմական գործ ու գոր-
ծող հարուստներու . . .

Մ. Ս.

իր վաճառականական շահերուն
մէջ և թէ՛ միանգամայն բարո-
յական տեսակետով : որովհետեւ
վերջին ժամանակներու բաղմա-
թիւ պարսիկ երկտասարդներ
սկսած են Իտալիա երթալ նկար-
չութիւն և երաժշտութիւն սոր-
վելու համար, և առկէ պատ,
առանձա՛ւ արտիներէ իվեր պարս-
կական ու իտալական ապրանք-
ներու փոխանակութեամբ, բա-
ւական շահաւէտ վաճառականու-
թիւն մը սկսած էր :

Վէճին առարկան այն էր որ,
Իտալացի վաճառական մը, Կոն-
ստնտանտնով, չորս միլիոն ֆր.
կը պահանջէր իր վարձատրու-
թիւն այն դատարն, որ, իբր թէ,
պարսիկ կառավարութիւնը պատ-
ճառած էր անոր բերած ապ-
րանքներուն վաճառման գործին
մէջ, իր անկանոն ու ապօրինի
գործողութիւններով : Այս Կոն-
ստնտ, Նասրէտտին շահին օրով ալ
մէկ ու կէս միլիոն ֆր. պահան-
ջած էր նոյն պատճառով և անգլ.
կառավարութիւնը պոչտպանած
էր գործը : Բայց Նասրէտտին
շահի առաջարկութեամբ Անգլիա
իբր միջնորդ գատաւոր կարգուե-
ցաւ, և Պօլսոյ դեսպանը, որուն
յանձնուած էր գործը, միայն
70,000 ֆր. որոշեց փոխանակ
մէկ ու կէս միլիոնի :

Այս անգամ Կոնստնտին ժառանգ-
ները նոյն օրինակ խնդիր մը ու-
ղեցին յարուցանել : Մուղաֆէ-
րէտտին շահը, իր հօր օրինա-
կին հետեւելով, Կոնստնտին Օսկար
թագաւորին յանձնեց խնդրին
լուծումը Իտալիոյ թագաւորին
հաւանութեամբ : Օսկար թագա-
ւորին հիւանդութեան պատճա-
ռով, խնդիրը յանձնուեցաւ դա-
հաճառանգին որ Ստոքհոլմի ի-
րաւարանական համալսարանին
հոշակաւոր մէկ դասախօսին

Խորհրդակցութեամբ, փետ. 2ին,
իր անդառնալի վճիռը տուաւ,
որով Իտալիոյ պահանջը ապօրէն
կը ճանչցուէր :

Նորոգայի հասարակական կար-
ծիրը համակրանքով ընդունեց
այս խաղաղասիրական համաձայ-
նութիւնը, որովհետեւ այս դա-
տավճիռը յոյց կուտար թէ, ա-
մենէն կնճռոտ միջազգային վէ-
ճերն ու կռիւներն անգամ աւելի
մեծ արդարադատութեամբ կընան
լուծուիլ միջնորդ գատարաննե-
րու միջոցաւ քան զէնքով, ուր
սովորաբար յաղթութիւնը կը
տանի ոչ թէ իրաւունքն ու ար-
դարութիւնը այլ կոպիտ ուժը :

ՔՐՈՆԻԿ

Փետր. 8ին Ս. Բեթերսպուրկի
նոր սակահամալսարանի տարե-
կան հանդէսը կատարուելով,
1898ի շրջանին տեղեկագիրը
կարգացուեց է : Այդ շրջանին
մէջ համալսարանը ունեցեր է
3867 ուսանող, որոնց 59 հայ-
լուսաւորչական : Վ. այսպէս հա-
մար միայն 75 շաբաթուրթիւն
ներկայացուեց է, որոնցմէ 16ը
ոսկի մետալով վարձատրութեան
արժանացեր են : Ասոնցմէ 4ը
հայ ուսանողներ են : Ալեք-
սանդր Աթաբէկեան, իրաւաբա-
նական ուսանող, ոսկի մետալի
վարձատրութեան արժանացած է
«Պայմանագրական գատաւար-
տութեան» մասին գրած շաբա-
ղրութեան համար : Ղմանապէս
իրաւաբանական ուսանող՝ Ռուբէն
Ֆոլշաննէսեան ոսկի մետալի
վարձատրութիւն ստացած է «Աշ-
խատանցներու մասին» պատ-
շատած թէզով :

Իսկ Արեւելեան լեզուներու ու-
սանող Նիկողայոս Ստոնց՝ «Հայ-

«Կեցցէ նորին Կայսերական Բարձ-
րութիւն Արցիւլ Համբար», ասում է
կայսրը մեղրածոր հնչիւնով : «Փա-
սիշաճում չօգ ետա՛ւ», մտնում ու
փնջատում են մի վայրկեան ասաջ
թոթովախա ու վախկա գրանիկ-
ները :

Բաժակը մտնեցնում են չրթուեք-
ներին : Բայց, ո՛վ սարսափ, բաժակի
միջից մի խո՛ւլ հեծկոտց է լուծւում :
Ականջ են գնում կայսրն ու կայս-
րուհին : «Բո՛յասնե՛ս» ենք, օգնեցի՛ք,
սանջուտ ենք» . . .

Իս Թուրքիայի Քրիստոնեաների
հառուցանքն է, զա նրանց արիւն
արցունքի ձայնն է . . .

Կայծակի արագութեամբ սլանում
է մի պատկեր կայսրն ու կայսրուհու
հոգեկան աչքերի առջիկց :

Կարմիր է պատկերը, որովհետեւ
նա արիւնով է նկարուած :

Կարած գլուխներ, անդամաշառ-
ւած դիակներ, սրտառողիտ մանկիկ-
ներ, աշխատողուած ու վիրատու
մարդկային անդամներ . . . իսկ այս
ամէնի վրայ չիւնուած է մի պարտա-
՛րտ այն պալատն է, որի մէջ իրենք
են նստած այդ բոլորէն :

Տեսնում են այն սեղանը, որի

չուրջը նստած են . նրա սանրը թաղ-
ւած են այդ դիակները սրտերի մէջ,
նրանց փորբերում, նրանց ջախջախ-
ւած ու ճղմեւած գանդերում :

Պատկերի մէջ երևում են «Ներքոյի
ջանքեր»-կենդանի-կենդանի այր-
ւող մարդկային մարմիններ, ցրթը
հանած . . . այս ու այն կողմում թափ-
ւած են կաշիները մարմիններ, բըռ-
նարուած ու բռնարարող կոշտեր,
կենդանի թագուող մարդկային էակ-
ներ, հրեղծ, թաւան, սրածու թիւն,
կոտորած, խաչելութիւն . . .

Սեղանի վրայի բոլոր ամանները,
բոլոր կերակուրները, բոլոր խմե-
լիքները և արդ ու զարդը երևում
են իրենց լսկական գոյներով, գրանք
ամէնն էլ չիւնուած են մարդկային
մտից ու արիւնից, սակրնրից ու
ջղերից . . . իրենց կերածն ու խմածը
կոտորածները միան ու արիւնն են
եղել . . .

Ճնցում, գոգում են Օգոստափառ
հիւրերը, գոյները նստում :

Սուլթանը, որի աչքին չէր երե-
ւում այդ վայրկեանական հետանկա-
րը, կարծում է, թէ զա բարեկամի
յուզմունքն է բարեկամի կենացը
խմելու ժամանակ զգացմունքների
յորդութիւնից պոթկած :

Շապկերը չքանում է, քէյֆը չա-
րունակում : Կենացները իրար են
յաջորդում : Օգոստափառ հիւրերն ի-
րենց են գոյիս, ինքիքը չաւաքում,
պաղարիւնութիւնը գանում :

Քրիստոնե ու Մահմադը հաշտած
են, նրանք գրկախառնում են . . .

Բայց վիշելիմ կայսեր միտքն է
ընկնում, որ մի կտոր հող, մի գա-
ղութաւոյ, մի ծովածոց է հարկա-
ւոր իրեն Լվանայում : . . . Նա յիշում
է, որ իր ճանապարհորդութեան նպա-
տակն այդ է : Ճնտնական խնդիր
կայ, արեւելքի մէջ քաղաքական շա-
հերի հարց կայ . . . Արեւելքի կաթո-
լիկների պաշտպանութիւնը, Մակե-
դոնիայի խնդիրը, Հայկական հարցը,
Ռուսաստանին մի քիչ կտարկուե-
նրա գէմ աւելի թւով պետութիւն-
ներ զինելու կատակածելի հարցը եւն.
և այլն :

Եւ նա գործի է սկսում զգո՛յն,
քաղաքագիտական նրբութիւննե-
րով :

Քրիստոնեութիւնն և Մահմադա-
կանութիւնը գրկախառնում են,
բայց Սուլթանին անհանգստացնում

է Գերմանիայի նոր պահանջը, իսկ ա-
բարկաւորն արած, գաղութաւոյ,
մի որ և է ծովածոց, նոր ու նոր
միտալաճաններ ու մեծաշնորհներ,
երկաթուղային նոր գծերի թոյլ-
աւութիւն, նոր նաւամատոցների
կառուցման հրամաններ . . . Սուլ-
թանի մաքուր անցում է, որ իր պե-
տութեան գոնձարանը գատարկ է,
բացարձակ գատարկ, իսկ վիշելիմ
Բ-ի այցը մի միլիոն ոսկուց էլ աւելի
նստեց իր վրայ . . .

Խնջողը շարունակում է, ուտում,
խմում են :

Բայց Սուլթանին յաճախ պաշա-
րում են իր սեւ սեւ մաքերը, իսկ
վիշելիմ Բ-ին նորից ուրախակի պէս
հետեւում են տանջւողների պատկեր-
ները : Սեղանի վրայ ամէն մի պնակ,
ամէն մի կտոր հաց, ամէն խմիչք
լիզու է աւել եւ կամայ անքում,
կամայ հառաչում է . . .

«Քրիստոնեայ ենք, օգնեցէ՛ք,
տանջում ենք, աղաթեցէ՛ք» . . .

ԳՍԱՊԱՐ

(—)(—)

կական ժողովածու Հարանց Վարքի ըստ Գրիգոր Մերենցի վերջին ժամատարական խմբագրութեան» թէզին համար սակի մետալի վարձատրութեան արժանացած է, և համալսարանական խորհուրդը որոշեց է որ այդ գրութիւնը համալսարանի ծախքով տպագրուի, պարունակած նորագոյն հետազոտութեանց համար:

Նոյն ճիւղին հետեւող ուրիշ հայ ուսանող մը Իվան Զավախով, նմանապէս սակի մետալ ընդունած է իր պատրաստած վկայականի թէզին համար:

Թիֆլիզի Հայոց Հրատարակչական ընկերութեան ի նպատակ յունվար 31ին երեկոյթ մը տուեր է, որուն զուտ արգելւնքը 700 թուպլի է եղած:

«Մշակ» իմացնելով որ «Եղբայրական օգնութեան» նպատակներուն մէջ կը գտնուին նաեւ Մոսկուայի և ուրիշ անդերու ուսուցիչները, կաւելցնէ թէ՛ այս երեւոյթը շատ միտմտաբար է, ոչ թէ նուէրին նիւթական քանակութեան կողմէ, որքան ի նկատի առնելով այն տրամագրութիւնները որոնք սկսած են տիրել ուսուցիչներու դասակարգին մէջ: «Մինչև այժմ, կըսէ Մշակ, ուսուցիչը ազգասէրները մի քանի պահանջական թերթերի միջոցաւ չեն քաջովմ տեղի անտեղի յարձակում գործել մեզ, հայերիս վրա և բարեկէլ այնպիսի մեղադրանքներ որոնք կարող են միայն հիւանդ երեւակայութեանց մէջ ծնունդ առնել, և երբ այդ սեւահոգիները կողքից, դուրս են գալիս ազնիւ և բարեխիղճ անձինք, որոնք այդ կեղտերը մաքրում են, հրապարակաւ պաշտպանելով կամ օգնութեան հասնելով հայածանքի ենթարկուած թշուառ ազգի մը, մարդ մի կերպ ներողամտութեամբ վերաբերվում է դէպի շարախօս զբարտիչները»:

Հանգուցեալ մեծահարուստ ուսանալ մը կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութեան կտակած է իր բոլոր հարստութիւնը, 111,983 թուպլի: Ընկերութեան խորհուրդը ամէն օրինական ձեւակերպութիւններու կատարումը աւարտած ըլլալով, այժմ սեփականացուցած է այս խոշոր ժառանգութիւնը:

Փետր. 13ին Պաղուի մէջ նշանաւոր հայ գերասանուհի տիկ. Սիրանոյշի ի նպատակ արտած ներկայացումէն 2,300 թուպլի զուտ հասոյթ գոյացիր է: Ասկէ զատ Տի. Սիրանոյշ 5000 թուպլ. արժողութեամբ զանազան նուէրներ ստացեր է:

Ատրպատականի զանազան քաղաքներէն ու մասնաւորապէս Սալմաստէն, Մալհամէն «Մշակ»ի հասած թղթակցութիւնները շատ գէշ կը նկարագրեն այդ կողմի հայերուն վիճակը: Չքաւորութիւն,

սով, թշուառութիւն մէկ կողմէ, միւս կողմէ պարտիկ կառավարութեան պաշտօնեաներուն անգթութիւններն ու հարստահարութիւնները, անտանելի կը դարձնեն բնակիչներուն կեանքը: Ամէն օր նոր նոր հալածանք կը սկսի. «չալախ» մը փնտրելու պատրուակաւ, ինչ որ լոկ իրենց երեւակայութեան մէջ գոյութիւն ունի, գիւղերը կը մտնեն, կը թալլեն, կը քանդեն առանց խղճահարութեան:

Ռուստուգի թատերասիրաց խումբը անցեալ շաբթու ներկայացուցեր է Բաֆֆիի «Նէյլի-Չալաչետտին»ը, թատերգութեան վերածուած: Թատերգութիւնը սակայն չէ կարողացած բուն վէպին իսկական ուժն ու կոթորկը պատկերայնել:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

Մ Ա կ ե Դ Ո Ւ Ի Ա
Վիէնայի էնֆորմատիօն լրագիրը Մակեդոնական խնդրին վրայ ընդարձակ տեսութեան մը մէջ կըսէ որ, Մակեդոնական հարցը արժարժուեցաւ ոչ թէ քաղաքական այլ ուղղակի տնտեսական պատճառներով: Պուլկարական անկախութեան քահանայ գոյութեան միջոցին, Պուլկարիա լցուեցաւ բժիշկներու, դասախօսներու, փաստաբաններու, ճարտարագետներու անհամար բազմութեամբ: Բոլոր օտարազգիները ճամբուեցան պաշտօնէ և անոնց տեղ բուն պուլկարներ անցան: Ասոնց մէկ մասը սակայն մակեդոնացիներ են: Այժմ Պուլկարիոյ մէջ 300,000 մակեդոնացի կայ. նոյն իսկ զօրքին մէջ 300 սպայ, 2000է աւելի զանազան պաշտօնեաներ և մեծ թիւ մըն ալ ուսուցիչ: Բայց Պուլկարիա չի կրնար ոչ հեռացնել զանոնք և ոչ ալ իրենց հայրենիքը վաճառել ուր յառաջդիմութեան համար ոչ մէկ միջոց կայ: Այս պատճառով անհրաժեշտ է ազատել զայն իր լուծէն և ազատ աստարէզ տալ: Մակեդոնական խնդիրը հացի խնդիր է, որուն առջեւ կընկերկին բոլոր մեծ տէրութիւնները ինչպէս կ'ըսէի մէջ եղաւ:

Ս Ե Ր Պ Ի Ա
Տարածայնուած էր որ Սերպիոյ նախկին արքայ Միլան և Սերպ կառավարութիւնը պատճառ եղան Ռուսիոյ ու Աւստրիոյ դեպպաններուն միջև խզումը մը առաջ գալուն: Հունիարական պաշտօնական թերթ մը կը հերքէ այդ կարգի խզումը մը գոյութիւնը և կըսէ թէ, Աւստրիոյ դեպպանը կամ կ'լուխօզարի նախարարը ոչ մէկ կերպով մասնակցած չեն այդ խնդրներուն: Ինչ ալ ըլլայ սակայն իրողութիւնը, առիկա յստականշական կէտ մըն է ըմբռնելու համար Ռուսիոյ և Աւստրիոյ քաղաքական

ձգտումները Պալքանեան թերակղզիին և մանաւանդ Պելկրատի մէջ: Ռուս կառավարութիւնը հրահանգ տուեր է իր Պելկրատի դեպպանտան քարտուղարին, շարունակել իր յարաբերութիւնները սերպ կառավարութեան և Ալեքսանդր թագաւորին հետ, բայց բնաւ յարաբերութեան չի մտնել նախկին արքային հետ:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Վիէննա գտնուող երկու պուլկար նախարարները, Նաչէվիչ և Դենէֆ, յաջողած են վերջապէս 260 միլիոն ֆրանքի նոր փոխառութիւն մը կնքել միացնելով պուլկարական բոլոր պարտքերը: Ասկէ զատ կարճ սլոյմանամամով 5 միլիոն ֆրանքի նոր փոխառութիւն մը ըրած են: Պուլկար նախարարներուն ձեռք բերած այս յաջողութիւնները Սօպրանիէին վաւերացման պիտի ենթարկուին:

Մեր անցեալ թուով սխալմամբ զրած էինք թէ Պուլկար կառավարութիւնը «երեք ամիս» իր պաշտօնեաներուն ամառաւճար պիտի չընէ: Կառավարութեան այդ որոշումը անորոշ ժամանակի մը համար է միայն:

Տասնեակ տարիներէ իվեր Վառնայի մէջ գաղթային տարանքներու վաճառականութեամբ պարապող յոյն հարուստ մը, Գարսո-Սքորինօ անցեալ օր իր տան մէջ անձնատղան եղած է: Անձնատղանութեան պատճառը գեռ յայնի չէ: Կը կարծուի թէ ցեղային հիւանդութեան մը հետեւանքն է, որովհետեւ հանգուցեալին հայրն ու եղբայրն ալ նոյն կերպով իրենց կեանքը վերջացուցած են:

Անգլիական ազատամիտ մամուլը մեծ զայրոյթով կը խօսի Սուտանի ընդհանուր նահանգապետ լօրա Քիչների գէմ, այն պատճառով որ հրամայեր է գերիզմանէն հանել Մահալի գիակն ու Նեղոս գետը նետել: Այս առթիւ «Տէրլի Նիւլ» կըսէ թէ այդ կարգի բարբարոս ու վայրի միջոցները կը նուաստացնեն Անգլիան ամբողջ աշխարհի առջեւ:

Բարիզեան թերթերը կը գրեն թէ Մերալոյտը անյարմար նկատած է նախարարական տագնապ մը առաջ բերել այն պահուն, երբ կառավարութիւնը օրէկանեաններու մեծ զաւազրութիւն մը երեւան հանած է արգէն, ապագայ կառավարութեան մը համար, զինուորականներու և պաշտօնեաներու մասնակցութեամբ: Հանրապետականները կը պահանջեն որ նախարարութիւնը խիստ միջոցներ ձեռք առնէ զաւազրներուն գէմ և խոստանայ հրապարակաւ քննել Տրէյֆիւսի դատը: Բարիզի համալսարանը իրեն

պատուակալ անդամ ընտրած է հոչակաւոր գերմանացի բժիշկ ասօթ. Գօխը:

Խալիվին հօրաքայրը Նազլը հանրմ, իսլամական աշխարհին մէջ չի տեսնուած նորութիւն մը կատարեց: Եգիպտացի իշխանուհին իր պալատը հրախրեց Գահրէի բոլոր երոպացի երեւելիները, հիւպատոսներ, դրամատէրներ, բարձրագոյն պաշտօնեաներ ներառյալ գտնուելու համար մեծ նուագահանդէսի մը զոր կազմակերպած էր իշխանուհին երոպական հոչակաւոր երգիչներու և երգչուհիներու մասնակցութեամբ: Իշխանուհին այս ընթացքը իր գէմ գրողաց ամբողջ մահմետական աշխարհի զայրոյթով: Թող սալ երկատասարդներու, և այն ալ կեալուրներու, մտնել հարէմի մէջ, ոտնակոխ ընել ամբողջ իսլամական ասանդութիւնները, մեծ սեյր է վայրենի իսլամ ամբոխին համար: Սուլթանին ներառյալ յոյն, Մուխթար փաշա, ի նշան բողոքի չէ պատասխանած հրաւերին: Իսկ արարական համալսարանը անէձք կարգացրէ «ուրացող» իշխանուհու հօյն վրայ:

Ա Ձ Դ

Պ. Տիգրան Թիւֆէկեան պատիւ ունի ծանուցանել իր յարգոյ յաճախորդներուն, որ այս անգամ Ռուսուզէն վերագտնալով, Ջրօսարան մը բացած է Տ. Պողոս Փափագեանի սան զիմաց, ընկերակցութեամբ կօսթիին Ալլամօֆի, Ջրօսարանին մէջ կը գտնուին ամէն տեսակ ըմպելիք, իրենց բոլոր պարագաներով Տ. Թիւֆէկեանի ձեռքով պատրաստուած, և երոպական ու արեւելեան ճաշակով թարմ կերակուրներ, զինները խիստ աժան: Մտքոր ու այսպ սպասարկութիւն: 1-4

ՎԱՐԴՈ
ԵՐԿՈՒ ՍԷՐ
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻԾ)
(Գին 1 Ֆրանկ)

Մնացած սակաւթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ Տ. Անտօն կոչի մօտ, Ռուսուզէն Հայկ Մալախանի սրճարանը:

ՍԻՆԱՒԻ ԹՈՒՂԹ

Տիար Տիգրան Տուճախեան կը ծանուցանէ թէ ի Փ. Պուլիս Գուրչուհիանի զիմաց, կը վաճառէ Ազգ. Հիւանդանոցի ամենէն ընտիր նոր տեսակ սիկարի թուղթէն, զեղնեալ գիւնրով մեծաքանակ և փոքրաքանակ: Բարեկործութիւնը և շահր զը պահանջին որ ամէն հայ գործածէ զայն: Կան նաև Պօն, Վոյթօ և ուրիշ ամէն տեսակ թուղթեր: Բանձնարարութիւնը կը կատարուին ճրտախ և փութով: 6-10

Отговорникъ: А. СУКЯСОВЪ
Печатница „Взаимность“ Варна.